ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Վարչական գործ թիվ ՎԴ/0092/05/12
վարչական դատարանի վճիռ

Գործ թիվ ՎԴ/0092/05/12

Նախագահող դատավոր՝ Ա.Միրզոյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«23» դեկտեմբերի 2013թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան), հետևյալ կազմով՝

նախագահող դատավոր՝	Արա Բաբայան
դատավոր՝	Հովսեփ Բեդևյան
դատավոր՝	Աշոտ Սարգսյան

Մասնակցությամբ՝

հայցվորի ներկայացուցիչ՝	Կ.Մեժլումյանի
պատասխանողի ներկայացուցիչ՝	Ա.Ումրշատյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերության տնօրեն Ստեփան Ասլանյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին թիվ ՎԴ/0092/05/12 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 26.03.2013թ. վճռի դեմ հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան) կողմից բերված վերաքննիչ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը ՀՀ վարչական դատարան ներկայացրած հայցադիմումով խնդրել է կազմակերպության կողմից «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերությանը 12.11.2011թ. և 06.12.2011թ. արված

հարցումներով պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար ընկերության տնօրեն Ստեփան Ալանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 12.11.2011թ. հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 30000 ՀՀ դրամի չափով, իսկ 06.12.2011թ. կրկնակի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար՝ 50000 ՀՀ դրամի չափով: «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ ընդդեմ «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերության տնօրեն Ստեփան Ալանյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա.Միրզոյան) /այսուհետ՝ Դատարան/ 13.04.2012թ. որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատարանը թիվ ՎԴ/0092/05/12 վարչական գործով 26.03.2013թ. կայացրած վճռով հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցը մերժել է:

Թիվ ՎԴ/0092/05/12 վարչական գործով Դատարանի 26.03.2013թ. վճռի դեմ հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն (ներկայացուցիչ՝ Կ.Մեժլումյան) կողմից բերվել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ դատարանի 07.05.2013թ. որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Վերաքննիչ դատարանի 07.05.2013թ. վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում բողոքում թույլ տրված խախտումները ըստ էության վերացնելով՝ բողոքը կրկին ներկայացվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, որը Վերաքննիչ դատարանի 13.06.2013թ. որոշմամբ ընդունվել է վարույթ:

Բերված վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել: Դատաքննությունը հայտարարվել է ավարտված 02.10.2013թ. և դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 23.10.2013թ.:

Վերաքննիչ դատարանի 23.10.2013թ. որոշմամբ թիվ ՎԴ/0092/05/12 վարչական գործով Դատարանի 26.03.2013թ. վճռի դեմ հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան) կողմից բերված վերաքննիչ բողոքով թիվ ՎԴ/0092/05/12 վարչական գործի քննությունը վերսկսվել է:

Դատաքննությունը հայտարարվել է ավարտված 29.11.2013թ. և դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 20.12.2013թ.:

Թիվ ՎԴ/0092/05/12 վարչական գործը քննող դատարանի կազմի դատավորների՝ գործուղման մեջ գտնվելու պատճառով բողոքը լուծող դատական ակտի հրապարակման օրը տեղափոխվել է 23.12.2013թ-ին:

Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.
Բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը, հաստատված համարելով, որ կազմակերպության երկու հարցումներին էլ ընկերության տնօրենը տվել է նույն պատասխանը. «Նույն պատասխանն է տրվել նաև կրկնակի հարցմանը», մեջբերելով հարցումների և պատասխանների տեքստերը և հղում կատարելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասին, եզրակացրել է, որ. «Ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն», պատճառաբանել է, որ. «Տվյալ դեպքում հայցվորի կողմից որևէ գրավոր հարցում ուղղված ընկերությանը, այն մասին, որ գրավոր հարցման հիման վրա տրամադրված տեղեկությունները ոչ հավաստի են կամ պարունակում են ոչ լրիվ տվյալներ, առկա չէ...»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը տեղեկատվություն փնտրողի համար իրավունք է սահմանում, իսկ տեղեկատվություն տնօրինողի համար՝ պարտականություն և ոչ հավաստի կամ թերի պատասխան ստանալու դեպքում տեղեկատվություն փնտրողին չի զրկում իր իրավունքների դատական պաշտպանության դիմելու իրավունքից, ուստի Դատարանը սխալ է մեկնաբանել նյութական իրավունքի վերը նշված դրույթը:

Շարունակելով ու մեջբերելով հարցումն ու պատասխանը՝ Դատարանը հղում է կատարել ՀՀ կառավարության 21.12.2006թ. թիվ 1925-Ն որոշմամբ հաստատված կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերին և եզրակացրել, որ նշված կանոնակարգում օգտագործվում են ««անարատ կաթ» (հում, խմելու)՝ կաթ, որը ենթարկված չէ բաղկացուցիչ մասերի կարգավորման և «անարատ չոր կաթ»՝ 20 տոկոսից ոչ պակաս յուղի զանգվածային մասով կաթնամթերք՝ պատրաստված բացառապես անարատ կաթից», հասկացությունները և պատճառաբանել է, որ «Կանոնակարգը իրականում «Կաթնափոշի» հասկացություն չի բովանդակում, ինչպես նաև չի բովանդակում «Բնական կաթ» հասկացությունը: Կանոնակարգի 4-րդ կետով սահմանված հասկացությունների մեկնաբանմամբ դատարանը եզրակացնում է, որ «անարատ կաթը (հում, խմելու) դա կաթն է, որը ենթարկված չէ բաղկացուցիչ մասերի կարգավորման, իսկ անարատ չոր կաթը, դա 20 տոկոսից ոչ պակաս յուղի զանգվածային մասով կաթնամթերքն է՝ պատրաստված բացառապես անարատ կաթից»:

Օրենսդրության մեջ օգտագործվում է «կաթի փոշի» եզրույթը, որը նույնական է «կաթնափոշի» կամ «անարատ չոր կաթ» եզրույթների հետ և համապատասխան օրենսդրությունն էլ իրենց կողմից վկայակոչվել է դատական նիստերին, դրանցից են՝ ՀՀ կառավարության 11.11.1998թ. թիվ 706, 10.04.2003թ. թիվ 413-Ն, 15.05.2003թ. թիվ 587-Ն, 31.07.2003թ. թիվ 961-Ն, 21.12.2006թ. թիվ 1836-Ն, 31.05.2007թ. թիվ 730-Ն

որոշումները, ՀՀ առողջապահության նախարարի 12.12.2006թ. թիվ 1437-Ն, 20.10.2008թ. թիվ 21-Ն հրամանները և այլն:

Ինչ վերաբերում է նրան, որ կանոնակարգում ոչ թե օգտագործվում է «բնական կաթ» եզրույթը, այլ՝ «անարատ կաթ», ապա երկու դեպքում էլ խոսքը գնում է հիմնականում կովից կթած կաթի մասին, առավել ևս, որ ընկերության տնօրենի պատասխանում էլ է օգտագործվում հենց «բնական կաթ» եզրույթը:

Շարունակելով՝ Դատարանը նշում է. «Ընկերության www.ashtarakkat.com կայքում տեղադրված կաթնամթերքի արտադրատեսակների փաթեթվածքի, սպառողական տարայի վրա կամ դրանց փակցված պիտակին առկա են Կանոնակարգի 4-րդ մասի 5-րդ բաժնի 38-րդ կետով սահմանված բովանդակությամբ մակնշվածքներ: Ընկերության վերը նշված կայքում բերված կաթնամթերքի արտադրատեսակների մակնշվածքներում առկա «Բաղադրությունը» վերնագրի տակ նշված է նաև մթերքների բաղադրությունը՝ Կանոնակարգի 38-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան»:

Ընկերության www.ashtarakkat.com կայքում տեղադրված կաթնամթերքի արտադրատեսակների մեջ անարատ կաթի քանակության վերաբերյալ տեղեկատվությունը (ըստ էության որոնցում առկա է անարատ կաթ) նշված է յուրաքանչյուր արտադրատեսակի արտադրանքի համապատասխան մակնշման մեջ՝ կանոնակարգով մակնշվածքին ներկայացվող պահանջներին համապատասխան:

Վերը նշված փաստական հանգամանքների և իրավական հիմնավորումների հիման վրա Դատարանը եզրակացրել է, որ տվյալ դեպքում ընկերության տնօրենի կողմից հայցվորին տրամադրվել է գրավոր հարցմամբ պահանջված ամբողջական տեղեկատվություն, հաշվի առնելով նաև, որ ընկերության կաթնամթերքների արտադրանքի մակնշումը բովանդակում է պահանջվող տեղեկատվությունը: Նման պայմաններում Դատարանը եզրակացրել է, որ առկա չէ տրամադրված տեղեկատվության ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակելու որևէ փաստ: Անկախ նրանից, ընկերության արտադրանքի վրա անարատ կաթի վերաբերյալ մակնշումը համապատասխանում է կանոնակարգի պահանջներին, թե ոչ, դա չի նշանակում, էական չէ, եթե նշված չէ, թե կոնկրետ արտադրանքի մեջ բնական (անարատ) կաթի քանակը որքան է, որն էլ կազմակերպությանը հետաքրքրող տեղեկատվությունն է եղել:

Ընկերության որևէ արտադրանքի մակնշման մեջ գրված չէ, թե դրանում բնական (անարատ) կաթի քանակը որքան է:

Այսպես, օրինակ, մեջբերում կայքից. «Դասական» թթվասեր 18%, բաղադրությունը՝ կովի նորմալացված կաթի սեր (անարատ կաթ, չոր անարատ կաթ, չոր անյուղ կաթ, կարագ, կաթնային յուղ), թթվասերի մակարդ (մեզոֆիլ կաթնաթթվային կուլտուրաներ): 100գ-ը պարունակում է յուղ՝ 18գ, սպիտակուցներ՝ 2.8գ, ածխաջրեր՝ 3գ: Էներգետիկ արժեքը 100գ-ում՝ 185.2կկալ: Պահպանել 2-6°C: «Դասական» կաթնաշոռ 7%, բաղադրությունը՝ կովի նորմալացված կաթ (անարատ

կաթ, չոր անարատ կաթ, չոր անյուղ կաթ), կաթնաշոռի մակարդ: 100գ-ը պարունակում է յուղ՝ 7գ, սպիտակուցներ՝ 16գ, ածխաջրեր՝ 2.2գ: Էներգետիկ արժեքը 100գ-ում 135.8կկալ: Պահպանել 2-6°C: Զուտ քաշը 200գ»: Ինչպես տեսնում են, նշում չկա այն մասին, թե որքան է կազմում անարատ (բնական) կաթը, որքան չոր անարատ կաթը (կաթի փոշին), որքան չոր անյուղ կաթը և այլն: Նման պայմաններում գտնում են, որ Դատարանը նման եզրահանգման է եկել ապացույցները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ և 24-րդ հոդվածների խախտմամբ գնահատելով, քանի որ ընկերության www.ashtarakkat.com կայքում տեղադրված կաթնամթերքի որևէ արտադրատեսակի մեջ անարատ կաթի քանակության վերաբերյալ տեղեկատվություն տեղադրված չէ, այն դեպքում, երբ հենց այդ տեղեկությունն է հետաքրքրել կազմակերպությանը:

Ավելին, նման մակնշումը չի համապատասխանում նաև Դատարանի վկայակոչած կանոնակարգի 4-րդ մասի 5-րդ բաժնի 38-րդ կետի պահանջներին, որի «ը» ենթակետի համաձայն՝ ՀՀ-ում իրացվող կաթի և կաթնամթերքի փաթեթվածքի կամ սպառողական տարայի վրա անմիջապես կամ դրան փակցված պիտակին պետք է լինի հետևյալ բովանդակությամբ մականշվածք՝ ը) մթերքի բաղադրությունը. մթերքի բաղադրությունը նշում են դրա բաղադրամասերի անվանացանկով՝ «Բաղադրությունը» վերնագրով:

Պատրաստի մթերքի բաղադրության մեջ չմտնող, բայց արտադրական գործընթացի համար գործնականորեն անհրաժեշտ վերամշակման նյութերը նշում են «Օգտագործելով» բառից հետո. «Մթերքի բաղադրության մեջ «անարատ կաթի», «անարատ չոր կաթի», «չոր յուղազերծ կաթի», «կաթնային չոր շիճուկի» և (կամ) «անարատ չոր սերուցքի» զանգվածային մասերը՝ տոկոսներով»: Ընկերության արտադրանքի մակնշման մեջ նշված չէ նաև անարատ կաթի զանգվածային մասերը՝ տոկոսներով, ինչը նշանակում է, որ Դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի նորմի խախտում, սխալ մեկնաբանելով վերը նշված կանոնակարգի դրույթները:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները հանգեցրել են դատական սխալի, մասնավորապես՝ հայցվորը զրկվել է ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածներով, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3, 6 և այլ հոդվածներով երաշխավորված տեղեկատվություն ստանալու իրավունքն իրացնելու հնարավորությունից:

Վերոգրյալից ելնելով՝ խնդրել են բեկանել Դատարանի թիվ ՎԴ/0092/05/12 գործով 26.03.2013թ. վճիռը, այն փոփոխել և հայցը բավարարել՝ անդրադառնալով նաև դատական ծախսերի (այդ թվում հայցվորի կողմից փաստաբանին վճարված գումարի) հարցին:

Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.
1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյանի կողմից «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերության տնօրեն Ստեփան Ասլանյանին ուղղված 07.11.2011թ. (149-ի 5) տեղեկատվություն ստանալու մասին հարցման համաձայն՝ նշվել է հետևյալը. «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական

կոմիտեի 2010թ. սեպտեմբերի 22-ի թիվ 245-Ա որոշման համաձայն «Աշտարակ-Կաթ» ընկերությունը Հայաստանի կաթնամթերքի շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները համարվում են տեղեկատվություն տնօրինող: Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները. 1) Ձեր կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց: 2) Խնդրում ենք տրամադրել ցանկը, թե Ձեր ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՝ ոչ, և/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»: Նույն հարցման համաձայն՝ հարցման մեջ, որպես «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հասցե նշվել է «ՀՀ, ք.Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ» հասցեն և «56-03-60» հեռախոսահամարը:

2. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ Շուշան Դոյդոյանի կողմից «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերության տնօրեն Ստեփան Ասլանյանին ուղղված 07.11.2011թ. (149-ի 5) տեղեկատվություն ստանալու մասին հացմումը «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերությունում ստացվել է 14.11.2011թ.:

3. «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերության տնօրեն Ս.Ասլանյանի կողմից «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահին ուղղված 17.11.2011թ. ամսաթվով թիվ 01-23/2011 գրության համաձայն՝ հայտնվել է հետևյալը. «Ի պատասխան 07.11.2011թ. 149-ի 5 գրության (ստացված 14.11.2011թ.-ին), ինչպես նաև առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության և օրենսդրության համապատասխան դրույթներով, տեղեկացնում ենք, որ. 1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ «Կաթնափոշի» հասկացությունը: Դրա փոխարեն սահմանված է, օրինակ՝ «անարատ չոր կաթ» արտահայտությունը, որն ստացվում է բնական կաթից: 2) Մեր ընկերության կաթնամթերքների բոլոր արտադրատեսակներն էլ արտադրվում են բնական կաթից, իսկ արտադրված կաթնամթերքի արտադրատեսակների մեջ բնական կաթի քանակության վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր արտադրատեսակի համար ներկայացված է մեր ընկերության կողմից արտադրվող և վաճառվող արտադրանքի համապատասխան մակնշման մեջ, որը նույնպես ՀՀ օրենսդրության պահանջն է»:

4. Գործում առկա փոստային առաքման ծրարի վրա կատարված գրառումների համաձայն՝ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի 17.11.2011թ. թիվ 01-23/2011 գրությունը 18.11.2011թ.-ին թիվ 0051 փոստային բաժանմունքից, թիվ RR 051132164 AM պատվիրված նամակով առաքվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին, 07.11.2011թ. (149-ի 5) հարցման մասին գրության մեջ նշված ք.Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ հասցեով, հետադարձ ծանուցմամբ: Նույն ծրարի վրա կատարված գրառումների համաձայն՝ ծրարը 22.11.2011թ.-ին հետ է վերադարձվել «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերությանը, ծրարի հետին մասում կատարված «հասցեն փակ է»

գրառմամբ: Ծրարի վրա փակցված հետ վերադարձի կտրոնի վրա առկա է փոստային ծառայության աշխատողի ստորագրությունը:

5. «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 10.05.2012թ. թիվ 2/3-872 գրությամբ փաստաբանական հարցմանը տրված պատասխանի համաձայն՝ թիվ RR 051132164 AM պատվիրված նամակը հասցեագրվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին, ՀՀ, ք.Երևան, Բուզանդի փող. 1/3շ., 4-րդ հարկ հասցեով, «Հայփոստ» ՓԲԸ-ի Երևան 10 փոստային բաժանմունքի կողմից հետ է վերադարձվել ուղարկողին՝ «Աշտարակ-կաթ» ՓԲԸ-ին ՀՀ, ք.Երևան, 0069, Դրոյի փող. 13 հասցեով՝ նամակի վրա փակցնելով CN-15 համապատասխան պիտակը «հասցեն փակ է» նշումով:

6. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հանրային կապերի պատասխանատու Անահիտ Քոչարյանի կողմից «Աշտարակ-կաթ» ՓԲ ընկերության տնօրեն Ստեփան Ասլանյանին ուղղված 06.12.2011թ. (150-ի 2) տեղեկատվություն ստանալու մասին կրկնակի հացման համաձայն՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 07.11.2011թ.-ին 149-5 թվագրմամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկել, որը, սակայն, մնացել է անպատասխան: ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեի 2010թ. սեպտեմբերի 22-ի թիվ 245-Ա որոշման համաձայն «Աշտարակ-Կաթ» ընկերությունը Հայաստանի կաթնամթերքի շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները համարվում են տեղեկատվություն տնօրինող ...»: Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները. 1) «Աշտարակ-կաթ» ընկերության կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե կաթնափոշուց: 2) Խնդրում ենք տրամադրել ցանկը, թե ընկերության կաթնամթերքներից, որն է բնական կաթից, որը՝ ոչ, և /կամ/ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում»:

7. Գործում առկա 06.12.2011թ. փոստային առաքման մասին անդորրագրի համաձայն՝ RR 057879992 AM կոդով նամակը «Հայփոստ» ՓԲ ընկերության թիվ 33 փոստային բաժանմունքից (թիվ 491 առաքանի) առաքվել է Երևան 0069, Դրոյի 13, «Մարզպետունի Ալեքսանյանին, Աշտարակ-Կաթ» ընկերություն:

8. «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերության տնօրեն Ս.Ասլանյանի կողմից «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահին ուղղված 12.01.2012թ. ամսաթվով թիվ 01-132/2012 գրության համաձայն՝ հայտնվել է հետևյալը. «07.11.2011թ. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից տեղեկատվություն ստանալու հարցում էր ուղարկվել մեր ընկերություն: Հարցումն ստացել ենք 14.11.2011 թվականին: 18.11.2011թ. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին պատվիրված ծրարով, հետադարձ ծանուցմամբ (պատշաճ կարգով) ուղարկել էինք հարցման պատասխանը: Պատասխանը ծրարով առաքվել էր ք.Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ հասցեով, սակայն հետ էր վերադարձվել «Հասցեն փակ» նշումով: Հետ վերադարձման

ամսաթիվն է՝ 22.11.2011թ.: Սույն գրությանը կից ներկայացնում ենք՝ Ձեր հարցման պատասխանը ծրարով առաքելու փաստը հաստատող փոստային ծրարի երկերես պատճենը «Հասցեն փակ» նշումով, ինչպես նաև հավաստիացնում ենք՝ մեր կողմից հարցմանը տեղեկատվություն չտրամադրելու միտում չի եղել, ինչպես փորձում եք ներկայացնել հայցադիմումի մեջ: Անհրաժեշտության դեպքում կարող եք տեսնել ծրարի փակ օրինակը և համոզվել ինքներդ: Կից ներկայացնում եմ հարցման պատասխանի կրկնօրինակը»: Նշված գրությանը կից «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերության կողմից ուղարկվել է նաև 17.11.2011թ. ամսաթվով թիվ 01-23/2011 գրության կրկնօրինակը:

9. Գործում առկա 12.01.2012թ. ստացման/հանձնման մասին փոստային անդորրագրի համաձայն՝ AR 049468947 AM կոդով նամակը «Հարցման պատասխան, տեղեկատվություն» «Աշտարակ-Կաթ» ընկերության կողմից ուղարկվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին: Նույն անդորրագրի վրա ստանալու մասին կատարված ստորագրության համաձայն՝ առաքանին հանձնվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին 16.01.2012թ.: Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները. Քննելով վերաքննիչ բողոքը դրանում նշված պահանջի սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը եկավ եզրակացության, որ բողոքը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.12-րդ հոդվածը սահմանում է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական զանցակազմը դրսևորվում է չորս բաղկացուցիչ մասերի (տարրերի)՝ վարչական զանցանքի (հակաիրավական վարքի) օբյեկտի, վարչական զանցանքի օբյեկտիվ կողմի (զանցանքի բովանդակություն), վարչական զանցանքի սուբյեկտի (ֆիզիկական անձ, պաշտոնատար անձ /իրավաբանական անձ/) և վարչական զանցանքի սուբյեկտիվ կողմի (իրավահարաբերության սուբյեկտի հոգեբանական-զգացական կարգավիճակ) միաժամանակյա առկայությամբ: Նշված տարրերից որևէ մեկի բացակայությունը բացառում է վարչական զանցակազմի գոյությունը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործը քննելիս վարչական դատարանը պարզում է, թե տեղի է ունեցել արդյոք վարչական իրավախախտման դեպքը, և առկա է արդյոք հայցադիմումում նշված անձի կողմից դա կատարելու փաստը, նախատեսված է արդյոք օրենքով վարչական պատասխանատվություն

տվյալ իրավախախտումը կատարելու համար, ինչպես նաև նշանակում է կամ մերժում է նշանակել վարչական տույժ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ օրենքով նախատեսված տեղեկությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով: Քննարկվող դեպքով վերոգրյալ իրավանորմի վերլուծության համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի առաջին պարբերության դիսպոզիցիայով նախատեսված վարչական իրավախախտման դեպքի առկայության համար անհրաժեշտ է օրենքով նախատեսված տեղեկության ապօրինաբար չտրամադրումը, որպիսի փաստի պարզումը միայն թույլ կտա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի առաջին պարբերության դիսպոզիցիայով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող վարչական դատարանին պատասխանելու այն հարցին, թե արդյոք կատարվել է վարչական իրավախախտումը: Ընդ որում՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշված նորմը պետք է մեկնաբանվի «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների լույսի ներքո՝ նկատի ունենալով, որ այդ օրենքով են կարգավորում տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, դրանով են սահմանվում տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները:

Այսպես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում բացահայտված է «տեղեկություն» և «տեղեկատվության տնօրինող» եզրույթների հասկացությունները, համաձայն որոնց՝ տեղեկությունն անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներն են՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ), իսկ տեղեկատվություն տնօրինողը՝ տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն են, պետական հիմնարկները, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունները և դրանց պաշտոնատար անձինք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապացուցման կարիք չունեն այն փաստերը, որոնք հակառակ կողմը չի վիճարկում, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը գտնում է, որ դրանց ապացուցումն անհրաժեշտ է:

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ սույն գործի փաստերի համաձայն

«Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է հանրային նշանակություն ունեցող կազմակերպություն, և նշված փաստն ապացուցման կարիք չունի, քանի որ այն վերջինիս կողմից չի վիճարկվել, հետևաբար տվյալ դեպքում «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է տեղեկատվություն տնօրինող:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածում զետեղված են տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողների պարտականությունները, համաձայն որի՝ տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ 1) ապահովել տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունը, 2) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը և պահպանումը, 3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն, 4) սահմանել իր կողմից բանավոր և (կամ) գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը, 5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին: Նույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված են այն դեպքերը, երբ տեղեկատվության ազատության խախտման համար նախատեսվում է պատասխանատվություն: Մասնավորապես՝ նշված հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաև նույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

Նշված իրավանորմերի համատեքստում մեկնաբանելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի առաջին պարբերությունը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ օրենսդիրը, նշված հոդվածում կիրառելով «օրենքով նախատեսված տեղեկություն» արտահայտությունը, նկատի է ունեցել, որ տեղեկատվություն տնօրինողը տեղեկատվություն փնտրողին պետք է տրամադրի բացառապես հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ տեղեկատվություն տնօրինողի կողմից տեղեկատվություն փնտրողին հավաստի և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու համար էական նշանակություն ունի հայցվող տեղեկատվության պատշաճ ձևակերպումը, որպեսզի բացառվի տեղեկատվության տնօրինողի կողմից իրենից ակնկալվող տեղեկատվության թյուրըմբռնումը: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տրամադրված տեղեկատվության հավաստիությունն ու ամբողջականությունը պետք է գնահատվի և ըստ դրա հաստատվի կամ հերքվի Վարչական իրավախախտման վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված վարչական իրավախախտման

դեպքի առակայությունը, բացառապես տեղեկատավություն փնտրողի կողմից փնտրվող տեղեկատվության ձևակերպման համատեքստում, իսկ դրանում պարունակվող ցանկացած թյուրընմբռնման հավանականությունը պետք է մեկնաբանել տեղեկատվություն տնօրինողի՝ դրա սուբյեկտիվ ընկալման լույսի ներքո:

Տվյալ դեպքում, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Շուշան Դոյդոյանը տեղեկություն փնտրելու և դա ստանալու նպատակով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին՝ «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ստեփան Ասլանյանին ուղղված 07.11.2011թ. թիվ 149-ի 5 տեղեկատվություն ստանալու մասին հարցմամբ խնդրել է տրամադրել հետևյալ տեղեկությունները. «1) Ձեր կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց: 2) Խնդրում ենք տրամադրել ցանկը, թե Ձեր ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՝ ոչ, և/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:»:

Այսինքն՝ տեղեկություն փնտրող կազմակերպությունն, ըստ էության, տեղեկատվություն տնօրինող «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական ընկերությունից նպատակ է ունեցել ստանալ հետևյալ տեղեկությունները, մասնավորապես՝ 1) կաթնամթերքը արտադրվում է բնական կաթից, թե կաթնափոշուց, 2) տրամադրել ցանկը, թե ընկերության արտադրած կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՝ ոչ, և/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

Վերը նշված հարցմանն ի պատասխան «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ստեփան Ասլանյանը 17.11.2011թ. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Շուշան Դոյդոյանին ուղղված թիվ Օ-123/2011 գրությամբ հայտնել է հետևյալը՝ «… Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չէ «կաթնափոշի» հասկացությունը: Դրա փոխարեն սահմանված է «անարատ չոր կաթ» արտահայտությունը, որը ստացվում է բնական կաթից: Մեր ընկերության կաթնամթերքների բոլոր տեսակներն արտադրվում են բնական կաթից, իսկ արտադրված կաթնամթերքի արտադրատեսակների մեջ բնական կաթի քանակության վերաբերյալ տեղեկությունը յուրաքանչյուր արտադրատեսակի համար ներկայացված է մեր ընկերության կողմից արտադրվող և վաճառվող արտադրանքի համապատասխան մակնշման մեջ, որը նույնպես Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջ է:»:

ՀՀ կառավարության 21.12.2006թ. թիվ 1925-Ն որոշմամբ հաստատվել է կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը (այսուհետ նաև՝ Կանոնակարգ), որը տվյալ դեպքում միակ իրավական ակտն է, որով սահմանված են կաթի և կաթից պատրաստվող արտադրանքի, դրանց բաղադրիչների, արտադրադրության տեխնիկական կանոններին, արտադրանքի մակնշման հասկացությունները և ներկայացվող պահանջները, հետևաբար «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերությունն իր արտադրությունն

կազմակերպելիս ուղղակի պարտավոր է առաջնորդվել Կանոնակարգի պահանջներով և ըստ դրա՝ տվյալ դեպքում փնտրվող տեղեկատվությունը՝ ներկայացված ձևակերպմամբ, սուբյեկտիվորեն ընկալել Կանոնակարգի սահմանումների ու պահանջների համատեքստում, ինչն էլ տեղի է ունեցել, հաշվի առնելով տեղեկատվության տրամադրման հարցմանը ներկայացված պատասխանի բովանդակությունը:

Վերաքննիչ դատարանը, սույն որոշմամբ չվերարտադրելով Կանոնակարգում սահմանված արտահայտություններն ու եզրույթները, փաստում է, որ Կանոնակարգում որևէ կերպ սահմանված, բացահայտված չեն տվյալ դեպքով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից փնտրվող տեղեկատվության ձևակերպմամբ նշված «բնական կաթ», «կաթնափոշի» հասկացությունները, ինչպես նաև, հաշվի առնելով նույն Կանոնակարգում զետեղված սահմանումներն ու կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջներն արձանագրում է, որ կաթի, կաթնամթերքի արտադրությունում օգտագործվող բաղադրիչները հանդիսանում են ոչ «արհեստական» հետևաբար՝ «բնական» կաթի տարբեր տեխնոլոգիական մշակման արդյունքում ստացած նյութերը, օրինակ «կաթի չոր յուղազերց մնացորդ», «անարատ չոր կաթ», «անարատ չոր սերուցք» և այլն:

Վերաքննիչ դատարանը փաստում է նաև, որ Կանոնակարգի 4-րդ մասի 5-րդ բաժնով սահմանված է կաթի և կաթնամթերքի մակնշմանը և փաթեթավորմանը ներկայացվող պահանջները, մասնավորապես՝ 38-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իրացվող կաթի և կաթնամթերքի փաթեթվածքի կամ սպառողական տարայի վրա անմիջապես կամ դրան փակցված պիտակին պետք է լինի հետևյալ բովանդակությամբ մակնշվածք՝ … ը) մթերքի բաղադրությունը: Մթերքի բաղադրությունը նշում են դրա բաղադրամասերի անվանացանկով՝ «Բաղադրությունը» վերնագրով:

Վերոգրյալից հետևում է, որ տեղեկատվություն տնօրինող «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերությունն «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը տրամադրել է վերջինիս կողմից փնտրվող տեղեկությունները՝ փնտրվող տեղեկատվության ձևակերպման և հիշատակված Կանոնակարգով կաթի, կաթնամթերքի արտադրությանն առաջդրվող պահաջների համատեքստում, մասնավորապես՝ հայտնել է, որ «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերության կողմից արտադրվող կաթնամթերքների բոլոր տեսակներն արտադրվում են բնական կաթից, իսկ արտադրված կաթնամթերքի արտադրատեսակների մեջ բնական կաթի քանակության վերաբերյալ տեղեկությունը յուրաքանչյուր արտադրատեսակի համար ներկայացված է ընկերության կողմից արտադրվող և վաճառվող արտադրանքի համապատասխան մակնշման մեջ:

Վերաքննիչ դատարանի համոզմամբ՝ այն պարագայում, երբ «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերությունն «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը հայտնել է, որ ընկերության կողմից արտադրվող կաթնամթերքների բոլոր տեսակներն արտադրվում են բնական կաթից, բացակայում է ընկերության կողմից բնական կաթից և ոչ բնական կաթից արտադրվող

կաթնամթերքների ցանկը տրամադրելու անհրաժեշտությունը, քանի որ, ինչպես արդեն նշվեց, կաթնամթերքի բոլոր տեսակներն արտադրվում են բնական կաթից: Իսկ ինչ վերաբերում է արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակի վերաբերյալ տեղեկատվությանը, ապա Վերաքննիչ դատարանը ևս մեկ անգամ փաստում է, որ տեղեկատվություն տնօրինող «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերությունն «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը ևս տրամադրել է վերջինիս կողմից այդ մասով փնտրվող տեղեկությունը՝ փտրվող տեղեկատվության ձևակերպման և հիշատակված Կանոնակարգով կաթի, կաթնամթերքի արտադրությանն առաջդրվող պահաջների համատեքստում, մասնավորապես՝ «Աշտարակ-Կաթ» ՓԲ ընկերությունը հայտնել է, որ բնական կաթի քանակության վերաբերյալ տեղեկությունը յուրաքանչյուր արտադրատեսակի համար ներկայացված է ընկերության կողմից արտադրվող և վաճառվող արտադրանքի համապատասխան մակնշման մեջ, որպիսի հայտնած տեղեկությունը, հաշվի առնելով դրանով կատարված համապատասխան արտադրատեսակի մակնշումներին կատարված հղումը՝ վերոգրյալ պատճառաբանությունների համատեքստում, որևէ կերպ չի կարող գնահատվել որպես ոչ ամբողջական, կամ ոչ պատշաճ տրամադրված տեղեկատվություն, նկատի ունենալով, որ ընկերության կաթնամթերիքի համապատասխան արտադրատեսակների վրա առկա մակնշումները հանրամատչելի են և տեղեկատվություն փնտրող «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը զրկված չէր իր կողմից փնտրվող տեղեկությունները համապատասխան արտադրանքի մակնշումից ստանալու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով վերաքննիչ բողոքում նշված իրավական ակտերին կատարված հղմանը, փաստում է, որ դրանցից և որևէ մեկում «կաթնափոշի» և/կամ «բնական կաթի» եզրույթները բացահայտված, դրանց հասկացությունները սահմանված չեն:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից Կանոնակարգի 4-րդ մասի 5-րդ բաժնի 38-րդ կետի երկրոդ պարբերությամբ զետեղված նորմին կատարված հղմանը, ապա Վերաքննիչ դատարանը փաստում է, որ դրանով սահմանված՝ մթերքի բաղադրության մեջ «անարատ կաթի», «անարատ չոր կաթի», «չոր յուղազերծ կաթի», «կաթնային չոր շիճուկի» և (կամ) «անարատ չոր սերուցքի» զանգվածային մասերը՝ տոկոսներով նշելու պահանջը բացառապես վերաբերվում է պատրաստի մթերքի բաղադրության մեջ չմտնող, բայց արտադրական գործընթացի համար գործնականորեն անհրաժեշտ վերմաշակման նյութերին, որպիսի պահանջը որևէ կերպ չի կարող վերաբերել հարցմամբ մատնաշված մթերքին՝ կաթնամթերքին: Վերաքննիչ դատարանը փաստում է նաև, որ գործում բացակայում է որևէ ապացույց, որը կվկայեր «Աշտարակ-Կաթ» ընկերության կողմից տրամադրված տեղեկատվության ոչ հավաստի լինելու մասին, մասնավորապես այն մասին, որ վերջինիս կողմից արտադրված կաթնամթերքը չի արտադրվում փնտրվող տեղեկատվության ձևակերպման մեջ նշված «բնական կաթ»-ից, որպիսի փաստի ապացուցման բեռը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի կանոնակարգումների համաձայն կրել է հայցվորը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանն

ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերոգրյալ իրավանորմերից, փաստերից, եզրահանգումներից և պատճառաբանություններից ելնելով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի պահանջներին համապատասխան բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները և կիրառելով դրանց նկատմամբ կիրառելի իրավական ակտերը, իրավացի փաստելով, որ պատասխանող ընկերության կողմից հայցվորին տրամադրվել է գրավոր հարցմամբ պահանջված ամբողջական տեղեկատվություն և առկա չէ տրամադրված տեղեկատվության ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակելու որևէ փաստ, եկել է սույն գործի լուծման վերաբերյալ ճիշտ եզրահանգման, և վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները չեն կարող հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոքը բավարարելու՝ թիվ ՎԴ/0092/05/12 վարչական գործով Դատարանի 26.03.2013թ. վճիռը բեկանելու համար:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին և հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ և 117.14-րդ հոդվածները՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 117.13-րդ և 117.14-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Վերաքննիչ բողոքը մերժել՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2013 թվականի մարտի 26-ի թիվ ՎԴ/0092/05/12 վարչական գործով կայացրած վճիռը թողնել անփոփոխ:

Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ	ԴԱՏԱՎՈՐ	ԴԱՏԱՎՈՐ	ԴԱՏԱՎՈՐ
	Ա.ԲԱԲԱՅԱՆ	Հ.ԲԵԴԵՎՅԱՆ	Ա.ՍԱՐԳՍՅԱՆ